30 Մարտի, 2016թ.

## ՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐԻ ՌԻՍԿԵՐԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Տեսչական հանձնաժողով դիմող անձիք հաճախ աղքատ և/կամ խոցելի, ձայնազուրկ կամ ոչ ազդեցիկ են: Նրանք կարող են վախենալ, որ Տեսչական հանձնաժողով հայտ ներկայացնելը որոշ մարդկանց կողմից կարող է ընկալվել որպես մարտահրավեր, դրանով իսկ դառնալով հաշվեհարդարի առարկա: Հանձնաժողովի կողմից գրանցվել են դեպքեր, երբ ներգրավված մարդիկ Հանձնաժողովի գործընթացի ժամանակ ենթարկվել են ճնշման և տուժել են: Հանձնաժողովը նշել է, որ հաշվեհարդարի ցանկացած ձև սպառնում է Համաշխարհային բանկի հաշվետվողականության գործընթացի ամբողջականությանը, և կարող է երկարաժամկետ հետևանքներ ունենալ Ծրագրի որակի և տուժած մարդկանց պատրաստակամության վրա՝ իրենց մտահոգությունը արտահայտելու այն վնասի մասին, որը կարող է հասցվել Բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում:

### ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

2. Հանձնաժողովի հիմնարար նախադրյալ գործառույթը կայանում է նրանում, որ տուժած անձիք կարող են հանգիստ մուտք գործել: Այս իմաստով, տվյալ ուղեցույցների նպատակն է՝ օգնել նվազեցնելու հաշվեհարդարի ռիսկը հայտատուների, նրանց ներկայացուցիչների և ասոցացված անձանց դեմ [1], և դրանով իսկ նպաստել անվտանգ միջավայրի ստեղծմանն այն մարդկանց համար, ովքեր ցանկանում են աշխատել Հանձնաժողովի հետ:

3. Այս ուղեցույցները օգնում են Հանձնաժողովին (I) ճանաչել և վերահսկել հաշվեհարդարի պոտենցիալ ռիսկերը, այդ թվում՝ առաջացող ռիսկերը, (II) նախագծել և կիրառել կանխարգելիչ միջոցներ՝ այդ ռիսկերը վերացնելու և նվազեցնելու, և (III) սահմանել համապատասխան քայլեր հաշվեհարդար տեղի ունենալու դեպքում:

4. Ուղեցույցները կազմվում են Հանձնաժողովի փորձի և այլ հաստատությունների սահմանված պրակտիկայի, ինչպես նաև բանկում ոչ պաշտոնական խորհրդակցությունների, այլ կազմակերպությունների հաշվետվողականության մեխանիզմների,

---

[1] «Ասոցացված անձանց» կարելի է սահմանել որպես անձիք, որոնք կապված են Հանձնաժողովի հետ և կարող են ներառել քննարկված ծրագրի հարցվողներին և այն անձանց, ովքեր դաշտում աջակցություն են ցուցաբերում Հանձնաժողովին (վարորդներ, թարգմանիչներ, միջնորդներ և այլն):

ինչպես նաև համապատասխան կազմակերպությունների -քաղաքացիական հասարակության (ԿՔՀ-ների) հիման վրա:

## <u>ՔԱՅԼ ԱՌԱՋԻՆ՝ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ</u>

5. Հաշվեհարդարի ռիսկը գնահատվում է Հանձնաժողով դիմելու և Հանձնաժողովի ամբողջ գործընթացն անցնելու պահից: Այն հիմնվում է ՁԼՄ-ների հաշվետվությունների, Ներկայացուցչության աշխատակիցների և Բանկի անվտանգության ծառայության անձնակազմի ճեպազրույցների, ինչպես նաև Հայտատուների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից ներկայացրած տեղեկատվության վրա:

6. Ռիսկերը գնահատվում են դրանց հավանականության և լրջության համատեքստում, և Հանձնաժողովի կողմից ներքին կարգով գրանցվում են որպես «Առաջնային կարևորության հարցերի արձանագրություն», որը ստեղծվում է յուրաքանչյուր դեպքի համար: Այս գործընթացի յուրաքանչյուր փուլում Հանձնաժողովը քննարկում և թարմացնում է այդ ռիսկերի գնահատումները խորհրդակցելով Հայտատուների և նրանց ներկայացուցիչների հետ ռիսկեր առաջանալու ժամանակ, կամ երբ իրադարձությունները մեծացնում են հաշվեհարդարի հավանականությունը: Բոլոր փուլերում Հանձնաժողովը կոչ է անում Հայտատուներին մտածել նրանց անվտանգության հարցերի մասին և տեղեկացնել ցանկացած վտանգի կամ առաջացող հաշվեհարդարի մասին:

7. Եթե Հանձնաժողովը գտնում է, որ տվյալ իրավիճակում կարող է իրագործվել հաշվեհարդար, Հանձնաժողովը կնախաձեռնի քննարկումներ Բանկի ղեկավարության հետ այն՝ քայլերի շուրջ, որոնք Ղեկավարությունը կարող է ձեռնարկել՝ Հայտատուների, նրանց ներկայացուցիչների և նրանց հետ կապված անձանց անվտանգության բարձրացման համար:

## <u>ՔԱՅԼ ԵՐԿՈՒ՝ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ</u>

8. ***Կանխարգելիչ միջոցառումներ***: Ռիսկերի գնահատման արդյունքում Հանձնաժողովը մշակում և հաստատում է պլան՝ յուրաքանչյուր դեպքի համար կոնկրետ կանխարգելիչ միջոցներ սահմանելու համար, խորհրդակցելով Հայտատուների և նրանց ներկայացուցիչների, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, Բանկի ղեկավարության և կազմակերպությունների հետ, որոնք վտանգված անձանց պաշտպանության հատուկ փորձ ունեն: Նման միջոցները պետք է հաշվի առնեն անձի սեռը, ռասայական պատկանելիությունը, ազգությունը, տարիքը, հաշմանդամությունը, սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը, կամ այլ կարգավիճակ: Միջոցները կարող են ներառել առաջարկներ հաղորդակցման միջոցների և ժամկետների, նիստերի վարման վայրի և ժամկետների, տրանսպորտային միջոցների, հուսալի միջնորդների օգտագործման, թարգմանիչների, միջնորդների և այլ խորհրդատուների ընտրության և համագործակցության, ինչպես նաև հատուկ կարիքներով մարդկանց համար մասնագիտացված միջնորդների

օգտագործման վերաբերյալ: Հանձնաժողովն իրավունք է վերապահում կիրառել այն կանխարգելիչ միջոցները, որոնք անհրաժեշտ է համարում:

9. Եթե Հանձնաժողովը համոզված է, որ չնայած կանխարգելիչ միջոցների կիրառմանը, Հայտատուների, նրանց ներկայացուցիչների կամ նրանց հետ կապված անձանց հետ փոխգործակցությունը կարող է հանգեցնել պատասխան հարվածների, այն կարող է որոշել ժամանակավորապես կապ չհաստատել նրանց հետ, և իր որոշման դրդապատճառները կբացատրի շահառուներին:

10. ***Գաղտնիություն***: Հայտի մշակման գործընթացում, Հայտատուների խնդրանքով կարող է պահպանել վերջիններիս գաղտնիությունը: Հայտատուների ցանկությամբ, նրանց անունները և անձնական տվյալները մնում են գաղտնի, Հանձնաժողովը պետք է պահի նման տեղեկությունը խիստ գաղտնի: Գաղտնիությունը Հանձնաժողովի գործընթացի կարևոր սկզբունք է հանդիսանում:[2] Այն ընդգրկում է Հայտատուի ինքնությունը և նրա կողմից ստացված անձնական տվյալները (բանավոր, գրավոր և էլեկտրոնային), որը կարող է հանգեցնել նրա գաղտնազերծմանը: Քանի դեռ անձնական տվյալների օգտագործման վերաբերյալ հատուկ իրազեկման համաձայնագիր չի տրամադրվել[3], Հանձնաժողովը այն չի օգտագործելու: Համաձայնագիրը ստանալուց հետո, Հանձնաժողովը որոշում է՝ արդյոք ինքնության բացահայտումը կարող է հանգեցնել հաշվեհարդարի, և եթե դա այդպես է, ապա Հանձնաժողովը չի հրապարակելու այդ տվյալները: Եթե գաղտնիության պահպանման պահանջը հստակ չէ, Հանձնաժողովը փորձում է այն հաստատել: Եթե դա հնարավոր չէ, ապա Հանձնաժողովն այն վերցնում է իր վրա:

11. Հանձնաժողովը պետք է հստակ բացատրի Հայտատուներին և նրանց ներկայացուցիչներին, թե ինչպես է պահպանվելու գաղտնիությունը, և տվյալ հարցում գործող ցանկացած սահմանափակումներ:

12. ***Դաշտային այցելություններ:*** Հանձնաժողովը մանրակրկիտ նախատեսում է տեղեկատվության հավաքագրման գործընթացը դաշտային այցելությունների ժամանակ, այդ թվում անհրաժեշտ տեղեկատվության տեսակը, և դրանից օգտվելու միջոցը: Դաշտային այցելությունների վերաբերյալ

---

[2] Տեսչական Հանձնաժողովը Համաշխարհային բանկում: Գործառնական ընթացակարգեր: Ապրիլ, 2014թ. 14 և 18:

[3] Իրազեկման համաձայնագիր տրամադրող անձը պետք է պատշաճ կերպով տեղեկացված լինի գաղտնիության նպատակի մասին, ինչպես կարող են անձնական տվյալները օգտագործվել Հանձնաժողովի կողմից, ինչպես այդ տվյալները պետք է պաշտպանված լինեն, և տվյալների օգտագործման հետևանքների մասին նրանց անվտանգության և բարեկեցության համար: Պետք է գործադրվեն հատուկ ջանքեր՝ համոզված լինելու համար, որ երեխաները և նրանց խնամակալները հասկանում են գաղտնիության իմաստը և դրա անհրաժեշտությունը:

- Նախագծման համար Հանձնաժողովը առաջին հերթին հենվում է Հայտատուների կամ նրանց լիազորված ներկայացուցիչների վրա:
- Հանձնաժողովը ընդունում է Հայտատուների առաջարկած հանդիպման վայրի ընտրությունը: Սակայն, եթե Հանձնաժողովը գտնում է, որ առաջարկված վայրը ռիսկային է, ապա առաջարկվում են այլընտրանքային վայրեր և/կամ հեռախոսազանգեր կամ անվտանգ նամակագրություն:
- Եթե աշխատանքը փաստաթղթավորվում է լուսանկարների օգնությամբ, Հանձնաժողովը չի կարող օգտագործել վտանգված ֆիզիկական անձանց նկարները կամ նշել նրանց գտնվելու վայրը: Հանձնաժողովը ձգտում է ունենալ բոլոր այն ֆիզիկական անձանց համաձայնագրերը, ովքեր կարող են նույնականացվել լուսանկարների միջոցով, այն բանից հետո, երբ կտրամադրվի տեղեկատվություն, թե ինչպես կարող են օգտագործվել լուսանկարները:
- Հանձնաժողովն առաջարկում է հաջորդական հանդիպումներ կամ զրույցներ, առաջարկում է համապատասխան մեթոդներ (հեռախոսազանգեր, էլեկտրոնային նամակագրություն, անձամբ և այլն): Հանձնաժողովը վարում է նման հաղորդակցման գրանցամատյան՝ պարբերական շփումները արձանագրելու և անվտանգության ռիսկերը վերահսկելու համար:

13. Ինչպես պահանջվում է նորմատիվ-իրավական դաշտով, Հանձնաժողովը իր այցերի ընթացքում պահպանում է զսպվածություն՝ զանգվածային լրատվությունից կամ այլ տեսակի հանրային ուշադրությունից խուսափելու համար:[4]

14. *Տեղեկատվության հավաքում և պաշտպանություն:* Այցելությունների ժամանակ, Հանձնաժողովը, որպես կանոն, արձանագրում է տեղեկատվությունը նոթբուքերի կամ էլեկտրոնային սարքերի միջոցով, սակայն, չի արձանագրում Հայտատուների կամ ասոցացված անձանց ինքնությունը, որոնք խնդրել են պահպանել գաղտնիություն: Հանձնաժողովը և նրա խորհրդատուները պահում են նոթբուքերը և էլեկտրոնային սարքերն իրենց անձնական իրերի հետ կամ փակ և ապահով տեղում: Այն տարածքներում, որտեղ անվտանգության հետ կապված իրավիճակը կարող է անկայուն լինել, էլեկտրոնային տեղեկատվությունը պահվում է կոդավորված տեսքով և գաղտնաբառով: Հանձնաժողովը և նրա խորհրդատուները պետք է պաշտպանեն տվյալները և չտարածեն այն:

15. *Հեռախոսազանգեր և բանավոր հաղորդակցություն:* Հանձնաժողովը ապահովում է բարձր մակարդակի խնամք հեռախոսազանգի ժամանակ, նույնիսկ, եթե գաղտնալսման կասկածանք չկա: Հանձնաժողովը խուսափում է հասարակական վայրերում կամ այլ անձանց ներկայությամբ աշխատանքային քննարկումներից:

[4] Տեսչական Հանձնաժողովի Խորհրդի երկրորդ վերանայման տեսչության 1999 Պարզաբանում, կետ 12:

16. *Թարգմանիչներ և միջնորդներ:* Համայնքի հետ հանդիպումների ժամանակ, Հանձնաժողովն ապավինում է Հայտատուների առաջարկած թարգմանիչների կամ միջնորդների վրա: Հանձնաժողովը պետք է համոզված լինի, որ թարգմանիչները և միջնորդները հասկանում են իրենց պայմանագրերով գաղտնիության պահանջները, քանի որ նրանք վերաբերում են այն մասնակիցների ինքնության պաշտպանությանը, ովքեր ներգրավված են անվտանգության սպառնալիքների գործընթացին: Քանի որ Հանձնաժողովի գործընթացը կարող է վտանգել թարգմանիչներին և միջնորդներին, Հանձնաժողովը տեղեկացնում է նրանց ռիսկերի գնահատման մասին և հնարավորություն է տալիս հրաժարվել առաջադրանքից: Հանձնաժողովը թարգմանիչների և միջնորդների անձնական և կոնտակտային տվյալները գաղտնի է պահում, և համոզվում է, որպեսզի առաջադրանքն ավարտելուն պես նրանք հանձնեն և հեռացնեն բոլոր տեակի նշումները (գրավոր, էլեկտրոնային, և այլն):

17. *Տեղափոխություն:* Հանձնաժողովն զգուշությամբ է կատարում տեղափոխման ընտրությունը: Այն կարող է խորհուրդ տալ օգտվել պատահական տաքսիներից, երբ անհրաժեշտ է, կամ կատարած այցի ողջ ընթացքում օգտագործել տարբեր տրանսպորտային միջոցներ: Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի սեփական անվտանգությունը կարող է վտանգվել, տվյալ տարածք այցելելու և այնտեղ հասնելու վերջնական որոշումը կապված է Հանձնաժողովից, որը սերտ համակարգործակցության մեջ է Համաշխարհային Բանկի անվտանգության ծառայությունների հետ: Հանձնաժողովը մանրակրկիտ սահմանում է ընտրություն տրանսպորտի:

18. *Աշտաղի տարկում:* Իր գործունեության ընթացքում Հանձնաժողովն ակտիվորեն կվերահսկի հնարավոր հաշվեհարդարը: Դա ներառում է յուրաքանչյուր բողոքատուի հարցում, թե արդյոք նրանք կամ նրանց հետ սերտորեն կապված անձիք ունեցել են որևէ մտահոգություն անվտանգության հետ կապված կամ բախվել են որևէ խնդիրների այցերի ընթացքում: Հանձնաժողովը բոլոր հարցվողներին տրամադրում է իր կոնտակտային տվյալները և կոչ է անում` անվտանգության որևէ խնդիր առաջանալու դեպքում դիմել իրենց` ուղղակի կամ անուղղակի: Հանձնաժողովը կնշի սպառնալիքների, ահաբեկման կամ հաշվեհարդարի բոլոր դեպքերը իր իրավասության և հետաքննության զեկույցներում, այն պահպանում է բողոքատուների և հարցվողների գաղտնիությունը, մինչև տուժածները կխնդրեն Հանձնաժողովին չանել դա:

19. *Համագործակցություն այլ ԱՀՄ-ների հետ:* Երբ Հանձնաժողովը համատեղ հետաքննության ընթացքում համագործակցում է միջազգային ֆինանսական հաստատությունների անկախ հաշվետվողականության մեխանիզմների (IAMs) հետ, այն պետք է ապահովի, որ համապատասխան արձանագրությունները տեղում լինեն` ապահովելու տեղեկատվության անվտանգությունը: Այսպիսի ԱՀՄ-ները պետք է պատշաճ կերպով տեղեկացվեն Հանձնաժողովի ռիսկի գնահատմամբ և այս ուղեցույցներով: Գաղտնի տեղեկատվությունը չի տարածվում առանց Հայտատուների կամ սոցացված անձանց համաձայնության:

## ՔԱՅԼ ԵՐՐՈՐԴ՝ ՀԱՇՎԵՀԱՐԴԱՐԻ ԱՐՁԱԳԱՆՔ

20. Եթե, չնայած ձեռնարկված կանխարգելիչ միջոցառումների սպառնալիքը իրականացվում է, Հանձնաժողովը նման դեպքերին անհապաղ առաջնահերթություն է տալիս, հիմնավորում փաստերն այնքանով, որքանով հնարավոր է, իրականացնում է պլանավորված, մշակված պատասխան Հայտատուներին, և տեղեկացնում է Համաշխարհային Բանկի համապատասխան մակարդակներին, այդ թվում` նախագահին և, անհրաժեշտության դեպքում նաև Խորհրդին:

21. Հանձնաժողովը մշակում է պաշտպանության ժամանակացույց (կոնկրետ էսկալացիայի քայլերով) և հարցն ակտիվ է համարում մինչև երաշխավորվի անձի անվտանգությունը հաշվեհարդարից: Հանձնաժողովը սա անում է բանկի ղեկավարության հետ սերտ համագործակցությամբ` գիտակցելով, որ շատ դեպքերում դա անհրաժեշտ կլինի Բանկի ղեկավարության` աշխատանքները կառավարելու համար: Ցանկացած առաջարկվող միջոցառումների ժամանակ առաջնահերթությունը կտրվի վտանգի տակ գտնվողների անվտանգությանն ու բարեկեցությանը:

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

22. Հանձնաժողովը կհետևի այս ուղեցույցներին, որոնք տեղադրված են իր կայքում: Խնդրանքը ներկայացնելու համար նրանք միասին կարդացել են գործող ընթացակարգերը և ընդհանուր ուղեցույցները: Բացի այդ, նրանք կհրատարակվեն և լայնորեն կտարածվեն Հանձնաժողովի քարոզչական միջոցառումների ժամանակ:

23. Հանձնաժողովի գործադիր քարտուղարը կգործի որպես աշխատանքների ընդհանուր համակարգող` կանխարգելելով և արձագանքելով հաշվեհարդարի մեղադրանքներին: Մինչդեռ, յուրաքանչյուր նշանակված աշխատակից կգործի որպես համակարգող իրեն հատկացված մասնակի գործով:

24. Այս ուղեցույցները պետք է վերանայվեն դրանց իրականացման փորձի հիման վրա և փոփոխվեն օգտակարությունը երաշխավորելու համար:

****